

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԷԴՈՒՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

**ՓՈԶՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀՀ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՀՀ ագրոպարենային համակարգում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման, նրանց հետագա կառավարման բարելավմանն ու զարգացմանը վերաբերող 2008-2010թթ. մեր կողմից բացահայտված հիմնախնդիրների լուծումը հնարավոր է այդ բնագավառում վարվող հիմնավորված ռազմավարության մշակման և իրականացման միջոցով: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել կանխորոշել ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունները:

Նախ տեղին է նշել, որ հանրապետության ֆինանսական շուկայում ձևավորվել է խիստ անհամամասնություն ֆինանսական միջոցների պահանջարկի և առաջարկի միջև: Առևտրային բանկերի վարկային «պորտֆելները» չեն կարող բավարարել բազմահազար գյուղացիական տնտեսությունների (շուրջ 340 հազար) և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների վարկային ռեսուրսների իրական պահանջարկը:

Բացի այդ, գյուղատնտեսական արտադրությունը բնական աղետների (երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, սելավներ և այլն) առաջացման բարձր հավանականության և ապահովագրական գործուն համակարգի բացակայության պայմաններում համարվում է բարձր ռիսկային, և վարկային միջոցների գերակշռող մասը տրվում է տնտեսության այլ ճյուղերի տնտեսավարողներին:

Միաժամանակ, ագրարային ոլորտը, համարվելով բավականին կապիտալատար, չի կարող արդյունավետ գործել առանց որոշակի չափերի հասնող կապիտալ ներդրումների: Հանրապետության գյուղացիական տնտեսություններում, ագրարային ոլորտի վերամշակող և սպասարկող ՓՄՁ սուբյեկտներում մշտապես առկա է վարկային միջոցների ճեղքվածք: Ըստ ուսումնասիրությունների, ներդրումների ներգրավման հիմնախնդիրն առանցքային է լինելու ոչ միայն միջնաժամկետ կտրվածքով, այլ նաև հեռանկարում: Փորձը ցույց է տալիս, որ ներդրումային ակտիվությունն անմիջական կապ ունի ագրարային ոլորտի տնտեսական աճի հետ:

Վերջին տասնամյակում օտարերկրյա պետությունների ագրարային ոլորտների տնտեսական աճի վերլուծությունը վկայում է, որ այն ձեռք է բերվել հիմնականում ներդրումային ակտիվության (վարկային «էժան» ռեսուրսների ներգրավման) շնորհիվ: Այդ երկրներում համեմատաբար կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին համապատասխան տնտեսական կառույցներ, որոնք ի վիճակի էին արագ հարմարվել շուկայի (ներքին և արտաքին) իրավի-

ճակի փոփոխություններին: Նշվածի հետ մեկտեղ, տնտեսագիտության տեսությունից հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում ներդրումների ծավալի աճը հանգեցնում է ազգային եկամտի ավելացմանը, ընդ որում ավելի մեծ չափերով, քան ներդրումների աճն է:

Ներդրումային գործընթացների կարգավորման համար առանձնանում են ֆինանսական շուկայի երկու կարևորագույն բաղադրիչները՝ բանկային կամ նպատակային վարկերը և արժեթղթերի շուկան: Բանկային վարկերի տոկոսադրույքները Հայաստանում դեռևս խիստ բարձր են (12-24%) և գերակշռում են փոքր չափերի կարճաժամկետ վարկերը: Բացի այդ՝ ագրոպարենային համակարգում համեմատաբար ցածր շահութաբերության մակարդակի, կոշտ մրցակցության, ինչպես նաև ռիսկայնության հետևանքով բարձր տոկոսադրույքներով վարկավորումը տնտեսապես աննպատակահարմար է տնտեսավարողների համար, որի հետևանքով ներքին շուկայում, դեռևս մեծամասամբ, իրացվում է ներմուծված պարենամթերքը, և լիարժեք չի օգտագործվում արտահանման ներուժը:

Ուստի, հանրապետության ագրոպարենային համակարգի տնտեսական կայուն աճի ապահովման նպատակով անհրաժեշտ է համապատասխան կառույցների միջոցով (նոր կամ արդեն իսկ ձևավորված) լուծում տալ նպատակային մատչելի պայմաններով (երկարաժամկետ, մինչև 10% տոկոսադրույքով) տարբերակված վարկավորմանը՝ ներգրավելով ինչպես ՀՀ պետական բյուջեի, այնպես էլ օտարերկրյա պետությունների և դոնոր կազմակերպությունների (վարկային ծրագրերի, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) աջակցությամբ իրականացվող, Հազարամյակի մարտահրավերներ Հայաստանյան ծրագրերի և այլն) ֆինանսական միջոցները:

ՓՄՁ-ների ստեղծումը և զարգացումը կախված է գյուղատնտեսական արտադրության գոտիականությունից և շուկայում ձևավորված պահանջարկից: ՓՄՁ-ներին աջակցության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից են՝ գյուղատնտեսական արտադրության խթանումը և կառուցվածքի օպտիմալացումը: Այդ խնդրի լուծումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ նպատակաուղղված է երկրի պարենային անվտանգության և նրա բաղկացուցիչ մասը կազմող պարենային անկախության մակարդակի բարձրացմանը:

ՓՄՁ-ների ստեղծմանն ու զարգացմանն աջակցությամբ, հնարավորություն է ընձեռվելու բարձրացնելու պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև տեղական արտադրության հաշվին պահանջարկի բավարարումը, որը ներկայումս կարևորագույն պարենամթերքի համար կազմում է 53-55% (էներգետիկ արժեքով հաշվարկված), այն դեպքում, երբ Հայաստանի մասն դեպի ծով անմիջական ելք չունեցող, խոցելի միջազգային հաղորդակցողիներով, պարենային ճգնաժամերի առաջացման ռիսկայնությամբ բնութագրվող երկրում այդ ցուցանիշը պետք է կազմի 75-80% (այդ հնարավորությունները կան):

Ագրարային արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման ուղղությունների կանխորոշումը, ինչպես նաև տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման կատարելագործումը և գյուղական ու քաղաքային աղքատության միջև առկա բևեռացման հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված արտադրության գոտիական մասնագիտացում: Շուկայական տնտեսության պայմաններում այդ գործընթացները հիմնականում կարգավորվում են շուկայական գործոններով, սակայն համապատասխան ուղղվածության ՓՄՁ-ների ստեղծմանն ու զարգացմանն աջակցելը պետական կարգավորման այն կարևոր լծակներից մեկն է, որով անուղղակիորեն պայմանավորվում է գոտիական մասնագիտացման օպտիմալացումը: Ագրա-

րային բարեփոխումների անցումային շրջանում նկատելիորեն խաթարվել է գյուղատնտեսական գոտիների ավանդական մասնագիտացումը, որի հետևանքով զգալիորեն կրճատվել են միավոր տարածությունից ստացվող համախառն արտադրանքը և արտադրողականությունը:

ՀՀ ագրոպարենային ոլորտում ՓՄՁ-ների զարգացման բնագավառում հայեցակարգային հստակ մոտեցումների ձևավորման և նախատեսվող մատչելի վարկավորման արդյունավետության բարձրացման նպատակով պետք է հիմք ընդունվի հանրապետության գյուղատնտեսության հիմնական ճյուղերի գոտիական մասնագիտացումը՝ աջակցելով վերջինիս համապատասխան ուղղվածություն՝ ՓՄՁ-ների ձևավորման համար:

Իհարկե, շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները իրացնող (միջնորդ գնորդներ), վերամշակող, արտադրությանը սպասարկող, փոխադրող, պահեստավորող կառույցների հետ էականորեն բարդ են, քան նախկին տնտեսակարգում ձևավորված հարաբերությունների ժամանակ: Արտադրողի, վերամշակողի, իրացնողի և պարենամթերքի ապրանքային շարժի այլ մասնակիցների գործելակերպը շուկայում պետք է բխի փոխշահավետության սկզբունքից:

Այդ պայմաններում պետության կողմից տնտեսական գործընթացների կարգավորման արդյունավետ լծակներից է ՓՄՁ-ներին մատչելի վարկերի տրամադրման միջոցով ներագրելը վերջիններիս ռացիոնալ տեղաբաշխման վրա: Դրա համար անհրաժեշտ է վերլուծել ինչպես հումքային բազայի առկայությունը և զարգացման հեռանկարները, այնպես էլ հստակ կանխորոշել վարկավորվող ՓՄՁ-ների ուղղվածությունը և բաշխվածությունն ըստ տարածաշրջանների՝ ելնելով աշխատանքի միջազգային բաժանման ու մասնագիտացման համատեքստում Հայաստանի կանխատեսվող հնարավորություններից:

Ձեռնարկատիրության համաշխարհային միտումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ձեռնարկությունների ընդհանուր քանակի շուրջ 90%-ը փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտներ են: Զարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրներում ՓՄՁ սուբյեկտներ են նոր աշխատատեղերի հիմնական ստեղծողները՝ ապահովելով մոտ 60% զբաղվածություն: ՓՄՁ սուբյեկտներն են ստեղծում նոր ապրանքներ և ծառայություններ, միաժամանակ հանդես գալով որպես մրցակցության ու ինովացիոն գործունեության աղբյուր՝ նպաստում են աշխատաշուկայում գիտելիքների և հմտությունների արդյունավետ բաշխմանը, արտադրում են ապրանքատեսակներ, որոնք մրցակցության մեջ են մտնում ներմուծվող ապրանքատեսակների հետ, ի վերջո դրանց զարգացմամբ է մեծապես պայմանավորված տնտեսության մրցունակության աճը:

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշի՝ համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) արտադրության ծավալն ընթացիկ գներով 2009թ. կազմել է 3165 մլրդ դրամ, 2008թ. 3646.1 մլրդ դրամի և 2007թ. 3149.3 մլրդ դրամի փոխարեն: Գյուղատնտեսությունը 2009թ. կազմել է 511.4 մլրդ դրամ, որի մեջ մտնում են որսորդությունը, անտառային տնտեսությունն ու ձկնաբուծությունը:

ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը 2009թ. կազմել է 85.6%՝ 2008թ. 106.8%-ի և 2007թ. 113.7%-ի փոխարեն:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, ՓՄՁ գործունեության և զարգացման գործում դեռևս կան շատ լուրջ անելիքներ՝ եղած զգալի թերություններն աստիճանաբար վերացնելու համար, հատկապես ՀՀ մարզերի կտրվածքով: Ելնելով նրանից, որ ՓՄՁ պետական աջակցության իրագործվող ծրագրերը հիմնված են ՀՀ տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա, ներկայումս ՓՄՁ զարգացումը մտնում է որակական նոր փուլ

և կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ ստեղծելով բարենպաստ գործարար միջավայր ձեռնարկատիրությանը զբաղվելու բնագավառում, ինչպես նաև տնտեսությանը հաղորդելով ինովացիոն ուղղվածություն:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման, հասարակության միջին խավի ձևավորման և երկրում տնտեսական, սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտի զարգացումը համարում է երկրի տնտեսության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ու ռազմավարությունը պետք է ուղղված լինեն ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացներում ՓՄՁ սուբյեկտների գործունեության և զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը և արդյունքում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և երկրում հասարակության միջին խավի ձևավորմանը:

Գյուղական համայնքներում ՓՄՁ-ների ձևավորումը և զարգացումը հնարավորություն կտան որոշակիորեն մեղմելու գյուղական աշխատուժի օգտագործման սեզոնայնությունը և ծանրաբեռնվածությունը, որը գյուղական աղքատության հաղթահարման հիմնական ուղղություններից է:

Ագրարային ոլորտում ՓՄՁ-ների զարգացման խթանումը պայմաններ կստեղծի գյուղատնտեսության զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական մթերքների ծավալների ավելացման և որակի բարելավման համար:

ՓՄՁ-ներում սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների կիրառման և արտադրատեսակների տեսականու ընդլայնման արդյունքում զգալիորեն կավելանան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում իրացման ծավալները, տեղական արտադրության հաշվին կփոխարինվեն մի շարք պարենամթերքներ, կբարձրանա գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը:

Ագրարային ոլորտում ՓՄՁ-ների ձևավորումը և զարգացումը պայմաններ կստեղծեն նաև գյուղական բնակավայրերում այլ ոլորտի ՓՄՁ-ների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև գյուղական ենթակառուցվածքների զարգացման և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման համար:

Հանրապետության հետճգնաժամային միջոցառումների իրականացման և տնտեսական զարգացման ներկա փուլում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղված է ոչ միայն բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, արտահանման պոտենցիալի զարգացմանը, պետություն – մասնավոր հատված սերտացմանը, այլ նաև հասցեական աջակցության ժամանակակից մեխանիզմների ու կատարելագործված ծրագրերի իրագործմանը:

Այս իմաստով կարևորվում է Հայաստանում պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացումը, որոնք հիմնված են կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են հանրապետության, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ագրովերամշակման ոլորտում ծառացել են մի շարք լուծում պահանջող խնդիրներ՝ կապված շրջանառու միջոցների համալրման, բեռնափոխադրումների, մաքսային և հարկային վարչարարության ու այլ բնագա-

վառների հետ: Նշված խնդիրների լուծման և ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման նպատակով, առաջարկվում է.

- ա) ներքին շուկայում ներմուծվող ալկոհոլային խմիչքները և զարեջուրը տեղական արտադրությամբ մասնակի փոխարինման նպատակով վերջինների ներմուծումը դարձնել լիցենզավորվող գործունեություն:
- բ) Ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանության նպատակով, վերանայել այն պարենամթերքի մաքսատուրքի դրույքաչափերը (10%-ից սահմանելով 15%), որոնք արտադրվում են հանրապետությունում:
- գ) Կրկնապատկել ներմուծվող ենթասկզբիզային սննդամթերքի սկզբիզային հարկի դրույքաչափը:
- դ) Ուսումնասիրել, ըստ առանձին ենթաճյուղերի, ՓՄՁ-ների զարգացման հնարավորությունները՝ ելնելով ներդրության հարաբերական առավելություններից, մասնագիտացումից, պարենային շուկայի կոնյունկտուրայից:
- ե) Խստացնել ներմուծվող պարենամթերքի (մասնավորապես թռչնամսի), ինչպես նաև անասնակերի և դրա բաղադրամասերի (հավելումների) որակի նկատմամբ պետական վերահսկողությունը:
- զ) Զննության առնել պարենամթերքի խոշոր խմբաքանակների արտահանման դեպքում շահութահարկի մասով որոշ արտոնությունների տրամադրման նպատակահարմարությունը:
- է) Ցածր տոկոսադրույքներով (կամ անտոկոս) երկարաժամկետ վարկերի տրամադրումը ՓՄՁ-ներին:

Անհրաժեշտ է հնարավորինս նպաստել ՓՄՁ-ների ստեղծմանը և զարգացմանը սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային համայնքներում՝ նկատի ունենալով արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը և գյուղական տարածքների համաչափ զարգացումը:

Առկա հիմնախնդիրների լուծումը պահանջում է պետական կարգավորման տնտեսական լծակների, մասնավորապես՝ նպատակային վարկավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և մարքեթինգային գործունեությանը բազմակողմանի աջակցության միջոցով գյուղատնտեսական հումքի արտադրության զգալի ներուժ ունեցող մարզերում խթանել ագրովերամշակման ուղղվածության փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը:

Առկա հումքային բազան միջնաժամկետ հեռանկարում, համապատասխան ներդրումների շնորհիվ, հնարավոր է ավելացնել ևս 15-20%-ով: Այդ խնդրի լուծման համար կարևորվում են ՓՄՁ-ների ստեղծումը և զարգացումը: Մասնավորապես, անհրաժեշտ է հանրապետության տարածաշրջաններում, գյուղական բնակավայրերի մարդկային, հումքային, նյութատեխնիկական ռեսուրսների բազայի հիման վրա, մատչելի վարկավորման և աջակցության այլ միջոցներով ձևավորել նոր ՓՄՁ-ներ: Այդ ՓՄՁ-ների ուղղվածությունը, ըստ ուսումնասիրության արդյունքների գնահատման, պետք է լինի.

- պահածոների արտադրությամբ զբաղվող ընկերություններ, որոնց կողմնորոշումը կլինի մուրաբաների, ջեմերի, օշարակների, հյութերի, տոմատի մածուկի, չրերի, էթնիկական շուկաներում մեծ պահանջարկ ունեցող ազգային քաղցրավենիքների արտադրությունը,
- կարտոֆիլի և հացահատիկի վերամշակումը,
- բուսական յուղերի արտադրությունը,
- սպանդանոցների առկայությունը և թարմ մսի վերամշակումն ու իրացումը,

- կաթի մթերումն ու վերամշակումը, որոնք սառնարանային տարողությունների միջոցով կապահովվեն կաթի մթերումն ու կարճաժամկետ պահպանումը, ինչպես նաև կաթնամթերքի արտադրությունը,
- սառնարանային պահեստային տնտեսությունները, որոնք կապահովեն թարմ պտղի, բանջարեղենի, մսի և այլնի երկարատև պահպանությունը (այդ ընկերությունները նշված աշխատանքները կարող են կատարել վարձակալությամբ տարածքներ տրամադրելու միջոցով, պայմանագրային հիմունքներով),
- ծխախոտի մթերումը, այդ ՓՄՁ-ները միջնորդական գործունեություն կիրականացնեն արտադրողների ու ֆերմենտացնող ընկերությունների միջև,
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական և այլ սպասարկումները:

Չափազանց կարևոր են սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության գործընթացները, որոնք պարենամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության հետ մեկտեղ պարենային անվտանգության հիմնական բաղադրիչներն են: Ինչպես միջազգային նորմատիվ ակտերով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ սննդամթերքի անվտանգության համար պատասխանատվությունը կրում են արտադրողները, ուստի, բացի վերահսկման գործառույթներից, պետական կարգավորման կարևորագույն տարրերից է՝ վերամշակող ընկերություններին (ՓՄՁ-ներին) համապատասխան աջակցության ցուցաբերումը: Այն կարող է իրականացվել ISO 9001-2000 որակի կառավարման, HACCP՝ սննդի անվտանգության կառավարման ռիսկերի վերլուծության և կրիտիկական կետերի վերահսկման համակարգերի ներդրման, մասնավոր հատվածի անկախ լաբորատորիաների տեխնիկական վերազինման, կադրերի պատրաստման, սպանդանոցների ստեղծման, բույսերի պաշտպանության, կարանտինի, անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության բնագավառին առնչվող այլ ուղղություններով արտոնյալ (ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ) նպատակային վարկերի տրամադրման միջոցով: Այս բնագավառում անհրաժեշտ է աջակցությունը նաև օրենսդրության, տեխնիկական կանոնակարգերի մշակման, կադրերի ուսուցման, ձեռնարկների հրատարակման, ինստիտուցիոնալ վերափոխումների ժամանակ տեխնիկական աջակցության, մարքեթինգային, խորհրդատվական ծառայությունները մասնավոր հատվածում բարելավելու և այլ ուղղությամբ:

Ագրարային արտադրանքի արտահանման ծավալների ավելացումը, ինչպես նաև ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի արդյունավետ պաշտպանությունն ագրարային ոլորտի միջազգայնացման արդի փուլում գրեթե անհնարին է առանց սննդամթերքի անվտանգության գործուն համակարգի ներդրման, քանի որ անդամակցությունն ԱՀԿ-ին պարունակում է նաև որոշ ռիսկեր ՀՀ ագրոպարենային ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում զարգացման համար: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև օրգանական արտադրության խթանմանը, որի ներուժը դեռևս չի օգտագործվում:

2009թ. մայիսի 29-ին ՀՀ կառավարության որոշմամբ տնտեսական բարեփոխումների բնականոն ընթացքն ապահովելու, այդ փուլում ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու, տնտեսության արդի մարտահրավերները հնարավորինս արագ հաղթահարելու, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների շահերը համակողմանի պաշտպանելու նկատառումով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով և 89-րդ հոդվածի 4-րդ կետով 2009թ. հունիսի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ը «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները, բացառությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների

կոմիտեի, 2008թ. արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն (այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը) ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումներ չեն կարող իրականացվել:

Սա իրոք աննախադեպ որոշում էր, որ կայացրեց ՀՀ կառավարությունը 2009թ. մայիսին՝ նպատակ ունենալով առավել բարենպաստ պայմաններ ստեղծել փոքր և միջին ձեռնարկությունների համար՝ հանրապետությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները հաղթահարելու նպատակով:

ՓՄՁ ոլորտի կարևորության գիտակցումը պայմանավորված է նաև վերջին 15-20 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսական զարգացումներով, որոնք ցույց են տալիս, որ նորաստեղծ ՓՄՁ-ներն են հանդիսանում նոր աշխատատեղերի ստեղծման մշտական աղբյուրը:

Ինչպես անցումային տնտեսության երկրների, այնպես էլ Հայաստանի տնտեսական միջավայրում փոփոխությունները շարունակական են լինելու, որն ինչպես նորաստեղծ ձեռնարկություններին, այնպես էլ վերջիններիս աջակցության նպատակով ստեղծված ենթակառուցվածքներից և ծառայություններ մատուցող կազմակերպություններից պահանջելու է ավելի ճկուն և խորը ձեռնարկատիրական հմտություններ ու գործողություններ:

Այս համատեքստում ակնհայտ է, որ ՓՄՁ ոլորտի կայացումը և զարգացումը Հայաստանում անհնար է առանց պետության կողմից լրջագույն աջակցության և ՓՄՁ հիմնախնդիրների հաղթահարման, ու լուծման հաջողությունը մեծապես պայմանավորված է պետական համապատասխան աջակցության առկայությամբ:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման, հասարակության միջին խավի ձևավորման և երկրում տնտեսական, սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտի զարգացումը համարում է երկրի տնտեսության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ու ռազմավարությունը պետք է ուղղված լինեն ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացներում ՓՄՁ սուբյեկտների գործունեության և զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը և արդյունքում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և երկրում հասարակության միջին խավի ձևավորմանը:

ՀՀ կառավարության 2011-2020թթ. ծրագրում նախատեսված է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է սահմանվեն անհատ ձեռնարկատիրության խրախուսումը և պաշտպանությունը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը, գործարար միջավայրի բարելավումը, գործարարության աջակցությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը: